

ԽԱՅԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՅՈՒՆԻՈՒՐ 1912

ԹԻԻ 7

Խմբագրողն է
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնահատ
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դու առք արեան բաղանիք
Հառարակական կեանք
Տառ գիտ մայր իմ (բանաս.)
Աւիստի յեղ. մեծ շարժումներ
Սրուն հարցը

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ
ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ
ՍԵՐՋԻՔ ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ
ԹԱԴԵՈՍ ԺԱՄԿՈՋԵԱՆ
ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Գաւառային Լուրեր

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՆ ԵԱՐՏՐՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزته سی مدیریتہ

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսաանեսայ հանդեսի-Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հասարակուի ամէն տաւ 1ին եւ 16ին, թուրքերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
սարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ,


Թուրքիոյ սարեկան	4	մհնիս	Արտադրանքի սարեկան	5	ֆր.
» վեցանեսայ	0.30	»	» վեցանեսայ	2.50	»

Բաժնեգինը բացարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար ա-
ռանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ նուէր:

ԱՄԱՍԻԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆՆԵՐՈՒՆ

Թերթի սեղական ցուիչն ու հաւաքիչն է Պր. Յովսէփ Բալուէեան, որուն մեր տեղա-
ան բաժանորդները իրենց բաժնեգինները վճարելով պարտին ստացագիր պահանջել:



ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏՄԻՐ

15 ՅՈՒՆԻՈՒՄ 1912

ԹԻՎ 7

ԳԱԻԱՌԸ ԱՐԵԱՆ ԲԱՂԱՆԻՔ

Խիտ գիտելի է, քաղաքակիրթ երկիրներու ունեցած այսօրուան այդ քաղաքականութիւնը, որով մասնաւորաբար իրենց գաւառները, սնտեսան կան ամուր կռուաններու վրայ՝ և կեանքի ու ինչքի անձեռնմխելիութեան լայն սահմաններուն մէջ պահել կը ջանան։ Իրենց այդ քաղաքականութեամբը միայն պետական շէնքերին՝ այսօրուան նախանձելի վիճակին մէջ դնելով, չունին այլևս այն ամբողջ մտահոգութիւնները... որոնք պաշտերը են խեղճ թուրքիայի նման արեան բաղանիքներու մէջ լողացող գաւառաքանդ երկիրներ։

Արեւելեան ու Արեւմտեան վերջին դիւանագիտութիւններուն մէջ, կը բացուի տարբերութեան խոշոր անջրպետ մը և սա գիտելի կերպով այսօր։ Ասանցմէ վերջինը կ'աշխատի իր պետական կազմը բնագիտական սկզբունքով կառավարել — արեւելքը որտէն երակ դրկելով ու զայն ներդաշնակօրէն երակէն ալ դէպի սիրա վերադարձնելով։ Իսկ առաջինը կը փափաքի այդ կենդանացուցիչ սնունդը կեդրոնացնել իրտին մէջ միայն, մասնելով սովորուել վիճակի մը, պետական օրկանիզմը ներկայացնող միւս մասերը—ԳԱԻԱՌՆԵՐԸ...

Այս փեսարազրուի դիւանագիտութեան աշակերտներն են, թուրքիան մասնաւորաբար, և Արեւելեան պետութիւնները ընդհանրապէս, որոնք կը

մեան քաղաքակրթութեան հսկայ թռիչքին առջև՝ դեռ մէյմէկ յետադէմ երկիրներ, հանդէպ Արեւմտեան քաղաքականութեան շարունակ ապշահար հիացողները եղած։ Այն քաղաքականութեան՝ որու շնորհիւ Արեւմտաքերկնային վերատեսչութեամբ մը՝ անօրինուեր է Արեւելի ճէրը դառնալու դարձներով զայն իր ստուեր թէ անաւստպէս և թէ քաղաքականօրէն, և սա՛ բառին ամէնալայն առումով։ Փայտնիքին նկատելի պարտոյան մինչդեռ գաւառները, սրբ էն կտրեւորագոյններն են երկրի մը գոյութեան պահպանման համար, այդ կենսահիւթէն չի զրկելուն մէջ կը կայանայ։ Սա՛ տնեցած են բոլոր քաղաքակրթ երկիրներ, և ասոր շնորհիւ տնոնք բարձրացած են ու դեռ կը բարձրանան։ Սա՛ սակայն կ'անաւստի գործադրուիլ ամբողջ Արեւելին մէջ ընդհանրապէս և թուրքիայէն ներս ալ մասնաւորապէս....

Այս դրութեամբ կառավարուիլ փափաքող պետութեան մը արդիւնքը կարելի հեռանցնել թէ՛ պիտի ըլլայ միայն անդամալուծում... որքան աւելնանոր մէջ՝ փոխան գիտութեան ու քաղաքակրթութեան յորդ ազդիւրները, հոսելու, կը հոսին եղբայրասպանութեան արիւնները առատօրէն, դարձը ներով գաւառները՝ արեան բարձրակամար կաւմիտ թաղանիթներ....

Մենք ընդունելով ուրեմն, գաւառներու տկարացումը պետութեան ևս սկարայումը ըլլալը, կուգանք անվերապահօրէն ըսել որ՝ մինչև թուրքիայ չ'աշխատի իր գոյութիւնը ապահովող գաւառներու ներկայ աններդաշնակ դրութիւնը ներդաշնակաւորել, նայեքան առեն ա՛ն պիտի գնայ արագօրէն՝ դէպի փորձանքներու լայն բաւիղները, ու սա՛ վստահաբար և անկասկածօրէն։ Հայաբնակ գաւառներու մէջ տեղի ունեցող դեռ բռնի իսլամացումներուն, կողոպտումներուն, բռնաբարումներուն և վերջապէս անմարդավայել բոլոր եղեռնագործութիւններուն, որոնք կը կատարուին ամէնայն սխրագործութեամբ, դեռ վերջ չի տրուեցան այսօրուան սահմանադրասէր կառավարութեան կողմէ։ Այն դարաւոր արեան թաղանիթը, որուն մէջ լողաց հայը ու դեռ կը թողուն որ լողայ, և երբ այդ թաղանիթը հիմնայատակ չի կործանուիր այսօրուան կառավարութեան կողմէ, ու անկանգուն կը մնայ իր հին կռուանին վրայ հաստատօրէն, այդ կրօնէք, ժամանակի անիւին մէկ զժրախա դարձուածքովը կը դառնայ օր մ'ալ Օսմ. պետութիւնը բազկացնող բոլոր ազգութիւններուն համար նոյն զգուելի թաղանիթը՝ տալով խիստ ցաւալի և ողբալի արդիւնք մը՝ որ յոսալի է։

Մենք նպատակ չունինք հայաբնակ գաւառներու այս արիւնալի տեսարանը մատնանիչ ընելով՝ անոնք միայն բարուք վիճակի մէջ տեսնել։ Մենք նպատակ ունինք՝ ս'նոնց այս անյաճոյ ու անիրաւուած վիճակը մատնանիչելով՝ տեսնել ամբողջ թուրքիան բազկացնող գաւառները ցան-

կալի խաղաղ զիճակի մէջ, և անտեսական բարձր մակարդակին վրայ: Այդ ատեն միայն թուրքիայ կրնայ ինքզինք ապահով նկատել՝ հեռու արօրուան հիւծիչ մտահոգութիւններէն....

Մենք կը պահանջենք ասոնք հայրենիքին շահուն համար:

Գաւառները պէտք է դադրին արեան քաղաքի մէջ ներկայացնելէ, դիպոյ կը պահանջէ քսաներորդ դարու քաղաքակրթութիւնը և պետութեան շահերը:

ԱՐՄԷՆ ՄԱՆԿԱՅԻՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Իթթիւտան է՝ իսկական սահմանադրականը, թէ՛ Իթիլաֆը... ահա օրուայ հարցը: Հասարակ շարժիլ փոխելուն պէս օրուայ մը մէջ ստանեակ պատգամաւորներ Իրքիմասէն Իրիլաֆին կ'անցնին: Ի՞նչէ՛ տասնց դրդապատճառը: Ես երբէք չեմ կրնար ակզրունքի տէր չ'ըլլալը և կիրքը պատճառ համարել ո՛չ, ասոնք հասարակական գէպքեր են, որոնց պատճառը անհասկանալի չէ այլ հասարակական, Ամեն մի հասարական երեւոյթի փոփոխում, ունի իւր անտեսա-հասարակական խոր պատճառը: Անհատը այդ ներքին երբեմն գաղաւթի ոյժի կամակատարն է: Երբեմն իսկ հլու, կոյր գործիքը, իսկ երբեմն ալ գիտակից ու զեկալար:

Ճիշտ այդպիսի պատճառներ ունի նաեւ ներկայ «կուսակցական պայքարը»: Այս կեանքի աչքի զարնող արտայայտիչը Իրիլաֆի կուսակցութիւնն է: Հիմա հարց կը ծագի, արդիւնքը ի՞նչ անտեսա-հասարակական պատճառներու արդիւնք է այդ կուսակցութիւնը: Հարցին քիչ մը խորը նայողին շատ պարզէ՛ այդ պատճառը:

Մեզ պարզէ՛ արդէն որ ներկայ սահմանադրութեան հիմնական դրոյշները եւրոպական և Տաւրիական եւրոպական առեւտրական շահերն էին: Թէ արտաքին և թէ ներքին դրամագլուխի և վաճառակա-

նութեան խիստ արգելիչ պայմանները պէտք է փոխուէին: Եթէ այդ փոփոխութիւնը ներքին չըլլար, արտաքին պիտի չ'ըլլար: Չպէք է մոռնալ ուրիշ պարագայ մը ևս. ներքին տուտար-արդիւնքերական կեանքը լինելով ոչ-թուրքերու ձեռքը, ասոնք միշտ կը ճնշուէին սիրող առատական և փաշայական դասէն որոնք առաջններու արդիւնքով միայն կը սնանէին: Ոչ թուրքերու, և յատկապէս քրիստոնեայ ազգերու ճնշուող մասին ձայնակ յեցաւ նաեւ տնտեսապէս շահակից եզոյ եւրոպային և այդ բողոքի արդիւնքը եղաւ ներկայ սահմանադրութիւնը: Էնվերներ և Նիսպիներ՝ տաճարատանի այն արթուն անհատներէն էին, որոնք նախագուշակելով վերահաս վրտանգը, օր առաջ հանդէս եկան արգելիչ դարմանները խորտակելու:

Այս էր պատճառը, որ ներկայ սահմանադրութեան ամենաանկեղծ չատագովները եղան վերոյիշեալ ազգութիւնները: Սակայն կար մեծ մաս մը որու համար խիստ անշարաքեր էր ներկայ սահմանադրութիւնը, այդ առաջնական և կոյնական դասն էր: Ատկէ վաստ, մեր մահմետական հայրենակիցներէն ասոնք, որոնք իրենց ճակատի քրտինքով չէին աշխատեր, որոնք նախկին պետական անձնաւորութեան սխալ քաղաքականու-

Թեւե՛ն քաջադէպութեամբ՝ իրենց ապրումստի մեջոցը՝ թէ թուրք և թէ քրիստոնեայ աշխատաւորներու և վաճառականներու հարստութեան թալանով կ'ապահովէին, անոնց ալ խիստ դառն պիտի գար սահմանադրութիւնը:

Տիրապետող կրօնը, պատրաստ էր միշտ տիրապետող կրօնին իւր ոտի տակ տեսնելու, իսկ այսօրուայ հաշտարութիւնը երբէք հաճելի չէր անոնց: Աւատականները, կրօնական այս տեսակետը փաստ բռնելով, կ'սկսին տգէտ մասային գրգռել, վերաբերմանցնել անոնց նախկին բնազդները և մզել ներկայ սահմանադրութեան դէմ:

Այս տարրի արդիւնքն է որոշ երեսփոխաններու հակասահմանադրական քայլերը, ինչպէս Սիւլէյման Սուաիի հարցը, Ասոնք իրենց նպատակին հասնելու համար, կ'ախտարին ղեկավարել իրաւունքները ընդդէմ, որպէսզի այն օրգանի միջոցով իրենց նպատակներուն հասնին:

Մեր երկրի և հետևաբար պարլամենտի մէջ հասարակական այս հոսանքը մեծ դեր կը խաղայ, ասոր պահպանողական անունը տանք:

Երկրորդ հոսանք մ'ալ կայ, սահմանադրութեան պահպանման կողմնակիցները են ասանք: Այս հարցի մէջ աւանդական շահագրգռողները նախկին տիրապետող ազգերն են, ազգերու իրաւահաւաստութիւն, «վաթանը միւշթէք» այս է անոնց նշանաբանը: Ասոր հետեող են ոչ միայն նախկին տիրապետող ազգերը այլ և նախկին տիրապետողներու այն մասը, որոնք համոզուած են թէ առանց ազգերու իրաւահաւաստութեան և «վաթանի միւշթէք» դադարաւոր իրադարձման, անկարելի է որ այս երկիրը հանգստութիւն գտնի: Ասոր ալ ազգասէս անունը տանք: Ահա այն երկու գլխաւոր հոսանքները, որոնք հիմնուած են հասարակական կազմի վրայ և բոնք կը պայմանաւորեն ներկայ քաղաքական կուսակցութիւններու մտայնութիւնը: Կոյրերն և հասարակաւորէն տնայնորէն անոնքն են որ կ'անդիտահանն այս փաստերը, ու քաղաքական և կուսակցամտայնական հարցերուն անհատական բնաւորութիւն կուտան:

Ներկայ կուսակցական պայքարին հիմերը հոս փնտռելու է: Ազատական տարրերու ջանքերով հիմնուեցաւ սահմանադրութիւնը: Առաջին անգամ երկրը քաղաքական ճշմարիտ պահանջները նկատը առնուեցան և յայտարարուեցաւ ազգերու իրաւահաւաստութիւն և «վաթան միւշթէք»: Սակայն, անդանայդ օրերը, աւատական և կրօնապետական դասերը և կոյր ենթարկութեան երկու կամայ-կամայ գլուխ բարձրացնելով իրենց նախկին փառքը ձեռք բերել կ'աշխատին:

Անոնք իթթիհատի մէջ տեսան իրենց թշնամին. այդ կուսակցութիւնը առաջին շրջանին ազատական էր. այս պարագան չէր կրնար համակրութիւն գտնել աւատական—կրօնապետական մտաւորականներու կողմէ և յառաջ եկաւ... իթթիհատի պառակտումը:

Այս առամի մէկ կողմն է. դառնանք միւսին:

Ոչ-թուրք տարրերը դժգոհ էին, որովհետեւ սահմանադրութեան խօստումները չէին գործադրուիր, տեղական ճընշումները կրկին ծայր տուին: Աւատական կեղծքումները դարձեալ հրապարակ եկած էին, նախկին «տիրապետող ազգը» դարձեալ տապալէզի տէրն էր և միայն կուղէր: Ահա այս պարագաները յատուկ բերին իթթիհատի «ազատական» հոսանքի դէմ դժգոհութիւն մը: Իթթիհատի այդ հոսանքը ազգուած էր ոչ այնքան վերջին բողոքէն, որքան աւատա-կրօնական բողոքէն, ասոր համար նա կամայ կամայ սկսաւ սահմանափակել իր ազա-

տական թեւերը մինչ այն աստիճան որ իսկական ազատական բողոքողներ բացէ իրաց ղէմ եկան կուռելու իթթիհատի այս սկզբունքներուն դէմ:

Իթթիհատի ազգայնա - կրօնական պայքարին մէջ կային նաեւ ոչ-քրիստոնեայ տարրեր, այսինքն դժգոհ արաքներ, ալպանիայիներ, թուրքեր և այլն: Սակայն այս ազատական բողոքին միացան նաեւ այնպիսի անձնավորութիւններ որոնք խիստ դժգոհ էին իթթիհատի նոյնիսկ կիսատ ազատականութիւնէն, որոնք իթթիհատի այս դիրքը վնասակար կը գտնէին կրօնա-աւատական շահերուն: Այսպիսիները թէեւ զիտէին որ նոր դժգոհ տարրը մէջ իրենց բոլորովին հակառակ սկզբունքի տէր անհատներ կան, սակայն ասոնք մտածելին միայն այս նոր ուժին մրանալ այնքան աստիճան, որքան աստիճան իթթիհատին կը հարուածեն, անկէ վերջը բնական է որ ասոնք զիտեն թէ ինչ պիտի ընեն... զէպի հին կարգերը: Չի մոռնանք իշխել նաեւ բողոքող տարրի մէջ կային այնպիսիներ նաեւ որոնք անձնական գիտումներով մտած էին:

Անոս արքան բազմազան պատճառներէն դրդուած՝ յառաջ եկաւ իրիշափի կուսակցութիւնը: Առայժմ, կրօնա-աւատական տարրերու պահանջը հրապարակ ելած չէ հոն, այլ սահմանադրութեան իրական գործադրութիւնը կը պահանջեն. և իրենց ներկայ պահանջով աւելի ազատական են, քան թէ իթթիհատը:

Իթթիհատ այսպէս ազատական տարրերու զօրեղանալը նկատելով, և որ գլխաւորն է ոչ-թուրք պատգամաւորներու անոնց հետ միանալը ազգի առաջ ունենալով, իրեն դիրքը ամբողջովին խախտուած գտաւ: Եւ որպէսզի դարձեալ կարողանայ նախկին դիրքը գրաւել հանդէս բերաւ ՅՅրդ. յօդուածը, ըստ որում պարլամենտի բախտը կախուած էր դահլիճէն, Սուլթանէն, որոնք իրենց

ջերմ կուսակցներուն էին: Այդ կերպով անոնք սկսան հարցը կրօնական հողի վերայ դնել, խալիֆայական արտօնութիւններու մասին խօսիլ. ասոր միակ նպատակը կրօնա-աւատական տարրերը իրենց մօտ քաշելն էր: Մի րոպէ ամէն մարդ կ'սպասէր որ իթթիհատի կրօնա-աւատական տարրերը խմբովին հոն պիտի փոխադրուին, բայց այնպէս չեղաւ, յատկապէս այն պատճառով որ այդ տարրերը կը կասկածին իթթիհատի ներկայ դիրքէն չին հաւատար որ իթթիհատը կրնայ կատարել հիմակուան առաջադրածը, այս պատճառով իթթիհատը ՅՅրդ. յօդուածը շատ արձագանգ չ'գտաւ:

Իթթիհատի կուսակցութիւնը հակառակ է սուլթանական իրաւունքներուն ընդլայնացմանը, ասոր գլխաւոր պատճառը՝ նախ իրենց հակառակորդի դիրքը կոտորելն է, երկրորդ իրենց և յետոյ անկախ խմբակի մէջ գտնուող ազատական տարրերու քաշալերութիւնն է: Եւ թէ հրապարակը գառուի, և պարզ լինի թէ իթթիհատը անկեղծօրէն խալիֆայական իրաւունքները ընդլայնելով, զուտ խղաւնական քաղաքականութեան կը հետեւի, այն ատեն նա խիստ կ'ուժեղացայ, որովհետեւ այդ կողմանէ մեծ հող կայ:

Այս է «կուսակցական պայքարի» ներքին աստառը: Այս այսպէս լինելէն վերջը հարցը կուգայ մեր դիրքին:

Ամենամեծ քննադատական դիրքը իթթիհատինն է. նախ որ իր քաղաքական մեծ սխալանքին պատճառաւ յառաջ եկաւ ոչ-թուրք ազգերու դժգոհութիւնը, որոնց միանալով աւատակրօնականները՝ ծնունդ տուին ներկայ ընդդիմադիրներուն, երկրորդ՝ այդ փաստէն յետոյ կ'ուզեն խիստ կասկածելի միջոցներով ամրացնել իրենց դիրքը, Սայիտ փաշային իրեն վանան դարձնելով:

Նկատի ունենալով այս, մենք քննադատելի կը գտնենք դաշնակցութեան

բռնած պաշտօնական այս դիրքը, որով նա համամիտ էր գտնուել իթթիհատի դըրութեան տէրը լինելուն, և այնքան յառաջ կ'երթան որ Բարերգի պ. դաշնակցականները սխառաբար միաժամ, առաջնորդի և իթթիհատի գլխավոր — այսինքն — առատու-կրօնական դասի հետ հեռագրով իրենց բուն համակրութիւնը կը յայտնեն իթթիհատի և Սայիա փաշայի ներկայ խաղերուն: Այս հեռագիրը ամենափառաւոր կերպով տպագրուեց թէ Թանխիկ և թէ Ազաւանքի մէջ, առանց նկատողութեան: Ասոր վրայ եթէ աւելցնենք ազատամարտի իթթիհատի պախա-րակելու մասին գրուած յօդուածներն իթթիհատական թերթերու մէջ թարգմանուիլը, հարցը կը պարզուի և հայե-բոս. դիրքը խիստ կ'առկածուի դրութեան մէջ կը մնայ:

Բարերախտաբար Հայութեան մեծա-մասնութիւնը, նոյնիսկ շատ դաշնակցա-կաններ դէպքի իթթիհատը՝ չունին այն վերաբերմունքը, ինչ որ պաշտօնական դաշնակցութիւնն է. բայց ասկէ՝ բարե-

բախտաբար միայն դաշնակցութեամբ չէ որ հայութիւն կը հասկցուի, կայ ուրիշ քաղաքական կուսակցութիւն, որը իւր իշխանի ու իրական պատասխանը տուաւ իրեն դիմողներուն: Հայերը երբէք չեն կրնար իթթիհատի հետ պաշտօնապէս համաձայնիլ: Անոնք բողոքողներու կողմն պիտի լինին և են:

Իսկ ինչ կը վերաբերի իթթիհատին, խիստ զգուշութեամբ պէտք է մօտենալ անոր, համենայն դէպս պիտի աշխատին անոր ազատական պահանջները ամրացընել, և այդ կուսակցութեան միայն այդ պիտի դերի մէջ տեսնել ուղղել:

Մենք գործունեայ մասնակցութիւն չենք կրնար ունենալ այդ կուսակցութեան հետ, քանի որ նա բաղձաբխտ տարրերէ բաղկացած է:

Մեր միակ գործը պիտի լինի կազմակերպուած պահել հասարակութիւնը և պատրաստ այնպիսի դիրքի մէջ, որ առ մէկ պարագային սիրով դիմէ իւր քաղաքացիական իրաւունքները պաշտպանելուն:

ԱՐՄԷՆ ԿԵՏՈՒՐ

ՏԵՐ ԶԻՍ ՄԱՅՐ ԻՄ

Ահաւ գիւղին՝ խաղաղ-խոնջին մեջ բողուած
Այսանեյի մեծութեանց մեջ բողուած
Կարասովդ կը տառապիմ, ո՛վ մայր իմ,
Եկուր, եկուր տա՛ր զիս, տա՛ր զիս ո՛վ մայր իմ:

Տարիներով պաշտամունքիդ առարկան
Միակ որդիդ, արի՛ հացորդ անբաժան
Հիմակ ա՛խ ո՛ւր, ո՛ւր բողուցիր զինքն անցե՛ր
Ինչո՞ւ չես գաւ, ու չես ըլլաւ որդւոյդ տե՛ր:

Նոյնիսկ տակ զանանդակա՛ն, ամայի՛
Պանդխտութեան ցաւով աղիս գալարի,
Եկուր մա՛յր իմ, բախտան դիր սե՛ւ վերքիս
Արցունքովդ մարե՛ հուրը իմ սրճիս:

Մանկական սուրբ վայելքներ կենսայոյզ
Կը կազմէին սերն ու բերկրանք իմ հոգւոյս

Բայց արդ մայր իմ, ա՛յ չունիմ սէր կենսութեան
Այլ գալարող սիրքս նկուն՝ ասի ու վախ:

Դեռափրփիք այս հասակիս մէջ մայր իմ,
Մէկ կը խամրի ու կը ծիւրի սեւ կեանքն իմ
Քու վեճ սիրոյդ հուր կարօտմն ես անձայն
Պիտի մեռնիմ, պիտի իջնեմ գերեզման:

Ամասիա

ՍԷՐՈՐԷ ՏԷՐ ՅԱՆՈՐԷԱՆ

Պատմական

Աւետարանի Յեղափոխական Մեծ Շարժումները

Բ.

ԿՐԾՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԴԱՐ (Reformation)

«Ինչ որ կ'ուզեմ որ ուրեմն անգի ընեն,
դուք ալ անոնց անանկ ըրեք:» ՅԻՍՈՒՍ

«Նոյնի դեմ գործելը ոչ ուղիւ է ոչ ալ
արդար:» ԼՈՒՏԵՐ

Տեսանք թէ ի՞նչպէս իմացական յեղափոխութիւնը կ'առաջնորդէր որդեկան դերը մտքի աշխարհին մէջ, միանգամ ընդ մէկտա պատուելով անոր հրաշագեղ երեւոյթները ծածկող խաւարի ու սգիտութեան այն թանձր քողը, որ սեւ ձեռքերով հիւսուած էր խեղդելու համար մարդկային բանականութիւնը: Տեսանք թէ իմացական յեղափոխութիւնը ո՞րպիսի խիզախութեամբ նորանոր հորիզոններ բացաւ, խորհելու և մտածելու ինչ նոր հոսանքներ սանդղակ մարդ էակին առաջը: Ա՛յ ճամբան հարթուած էր. կարելի՞ էր միթէ որ մարդկային հոգին անկուր, անտարբեր մնար մաքի այն փառաւոր զարթոնքին առջև, որ անխուսափելի նախորդակն էր միայն հոգեկան զարթոնքին: չէր կարող ուրիշ կերպ լինել, քանի որ պատմա-հոգեբանական ուղին այլ կերպ չէր գծուած: Ուրեմն բանանք այդ յե-

ղափոխական յանգուգն շարժումներուն երկրորդ վարագոյրը, և ա՛յ բայ մաքով ու բաց աչքերով դիտենք հոգեկան աշխարհը յառաջ վարող այն պատճառով զէմքերը, որոնք զարթուեցնում էին երկունքին մէջէն հեղեղանալու գուրս եկան, հասկըցնելու մեղի թէ ի՞նչ բան է կրօնը, և ի՞նչ ըսել է խիղճ և խղճի ազատութիւն:

* *

Որպէսզի կարենանք լաւ ըմբռնել կրօնի և կրօնական յեղափոխութեան էությունը, որպէսզի կարենանք որոշ գաղափար մը կազմել քրիստոնէական վարդապետութեան կազմութեան նկատմամբ, պէտք է որ գոնէ թեթեւ ակնարկ մը զարձանենք նախաքրիստոնէական այն փառաւոր շրջանին, ուր փայլեցան կրօնական չորս մեծ առաքեալներ, — Մովսէս, Զրադաշտ, Կոմբիւկիոս և Պուտոս:

Գիտենք թէ Մովսէս եկած էր միասու-
ուածեան (Monotheistic) զազափարքի
հաստատելու մարդոց սրտերուն մէջ,
վրէժխնդիր եհովայի մը մարմնացումով.
մինչդեռ անկէ վերջ Զրադաշտ եկած էր
երկաստուածեան (dualistic) զազափարա-
կանը, ներմուծելու մարդոց մէջ, անընդ-
հատ կռիւ յայտարարելով Զարին կամ Ահ-
րիմանին դէմ, և անոր վրայ բարիին կամ
Որմիզդէին անպայման աղքատակր պան-
ծայնելով: Եւ սակայն Կամփիւկիոս՝ Զի-
նայէներու այդ մեծ վարդապետը Քրիս-
տոսէ վեց դար առաջ յայտարարեց այն
հրաշափ սկզբունքը, զարեւրու այն Gold-
en rule իր ժխտական ձևին մէջ, զոր
հիսուս ի վերջոյ բարեփոխեց հաստա-
տանի. — «Ինչ որ չես ուզեր որ ուրիշներ
եղբի չընեն, դու և ալ անոնց անանկ մի ը-
նեն:» Եւ անդին Պուտտա, Կամփիւկիոս-
ի ժամանակակից այդ մեծ բարեկարգի-
չը վերջապէս եկաւ պնդելու և հաստա-
տելու թէ՛ մարդ իր փրկութիւնը կրնայ
գտնել ոչ թէ կրօնական աւելորդ ծէսե-
րու և արարողութիւններու մէջ, այ-
սօսի մաքուրեան եւ ուղղամտութեան մեջ:

Անա այս բոլորէն վերջ եկաւ Քրիստոս
«ոչ թէ օրէնքները աւերելու, այլ զանոնք
յրաջնելու համար:» Քրիստոս եկաւ, և
իրմէն առաջ ապրող այն անմահ առաք-
եալներուն կրօնա-բարոյական մեծ ճրշ-
մարտութիւնները հաստատելով, անոնց
վրայ հիմնեց նոր կրօնք մը — սիրոյ կրօն-
քը, որ խնայապէս կոչուած էր իշխող մարդ-
կութեան կրօնքը, քսաներորդ դարու
փառաւոր քաղաքակրթութեան կրօնքը:
Եւ այսպէս ալ եղաւ, քանի որ Քրիստոս-
նէութեան մէջ ալ խառնած, մարմնացած
էին արեւմտի առաքելական սկզբունքներ,
որոնք ինչպէս առաջին դարուն նոյնպէս
և այժմու 20րդ դարուն նման պահանջ-
կոտ ժամանակի մը կրօնական, բարոյա-
կան ու զարգացական բոլոր պէտքերուն
ու հետազոտութիւններուն հիանալիօրէն

կը պատշաճին ու հարկ եղած գոնացում-
ները կուտան աւա հո՛ղ է քրիստոնէական
կրօնի իսկական մեծութիւնը, և քաղա-
քակրթ մարդկութեան մէջ անոր ծա-
ւառմին բուն գաղափարը:

Սակայն և այնպէս, Քրիստոնէական
այդ պարզ ու մաքուր կրօնը չի մնաց իր
խնկութեանը մէջ, իր նախնական պար-
զութեան ու բնականութեան մէջ. ան
ազաւազուեցաւ ճիշդ այնպէս, ինչպէս
իր նախորդները — Զրադաշտականութիւն,
Պուտտայականութիւն և ինչ. Դիւանք թէ
ինչու. պատմութիւնը մեզ ցոյց կուտայ
թէ Հռովմէական առէն ինչ ձեւապաշտ
յատկանիչ մը կը կրէր. երբոր Քրիստո-
նէութիւնն ալ մեծն կուտանդ խնտոսի ո-
րով Հռովմէական կրօնը դարձաւ,
անա այդ թուականէն սկսեալ Հռովմէական
ձեւապաշտ ոգին դարձ քրիստոնէական ու
գիւրն մէջ, այնպէս որ միջին դարու չոր-
ջանին ան արդէն ալիսկերպուած ու
խեղդուած էր արտաքին ծիսակատարու-
թիւններու ու աւելորդապաշտութիւննե-
րու միջև: Յիսուսի սորվեցուցած այն-
քան պարզուկ ու բնական սկզբունքնե-
րը ա՛լ անձանաչելի դարձած էին պապե-
րու կրօնական ու քաղաքական զարնու-
րելի գերիշխանութեան առջև: Պաթմու-
մը մօտալուս էր. պէտք էր որ սիրոյ կր-
օնը գար վերջապէս ասպարէզ, թօթա-
փելով իր վրայէն իր գեղեցկութիւնը նը-
սեմացնող այն բոլոր բռնազբօսիկ պայ-
մանները, որոնք նպատակ ունէին ճրշ-
մարտութիւնը միայն ողորդել, և ողորդ
ժողովուրդներ իրենց կաշկանդիչ ու կե-
ղեքիչ շղթաներուն սակ՝ քամել: Բայց
կարելի էր միթէ բողոքաւար արեգին դէմ
վարադայր քաշել, և մինչև երբ...

Ճերմուր պայքում կ'առաջագնէ. — այս
էր բնական օրէնքը ինչպէս անտեսական
ու քաղաքական աշխարհներուն մէջ,
նոյնպէս և կրօնականին մէջ: ԺԶ դա-
րուն մէջ՝ երբ պապական ճնշիչ աղղե-

յութիւնը ծայրայեղ դադարեցնակէտին հասաւ, կրօնական յեղափոխութիւնն ալ անխուսափելի դարձաւ: Ուրեմն թուենք համառօտակի այդ մեծ յեղափոխութեան ծագում տուող ուղղակի դրդապատճառը:

Գիտենք թէ Հռովմէական կայսրութիւնը ամենամեծ ծառայութիւնը մատուց քրիստոնէութեան ծառայումն համար ամբողջ Եւրոպիոյ մէջ. Եւրոպական բոլոր մեծ ազգերը կաթոլիկ քրիստոնեաներ էին եղած անոր շնորհիւ. և սակայն ԺԲ դարէն սկսեալ յաջորդաբար Անգլիոյ, Ֆրանսայի, Պոնտիոյ զանազան կողմերը զԺգոնութեան բողոքող արտայայտութիւններ անպակաս էին դարձած: ԺԳ դարուն Ալբիկեան ազանգը իր խանձարութիւն մէջ խեղդելու համար, Հռովմի օրուան պատը Խնովկինո վերջին խաչակրութիւնը քարոզեց անոր դէմ, Ալբիկեանները յայտարարելով «աւելի անօրէն քան Սարակինսաները» կարծես քրիստոնէութեան նախնական դարերուն մէջ թափուած հաղարաւորներու արիւնները դեռ չէին բաւած, պէտք էր այս անգամ ալ Սիմոն ար Մոնֆօր կոչուող անագորոյն դա՛իճի մը ձեռքով գեղեցիկ դալարագեղ գաւառներ ամայի անապատներու վերածել. և այն ալ յանուն ուղղափառ կրօնի, յանուն Աստուծոյ ամենամեծ փառացր:

Եւ սակայն ձառագայքը չի թաղուիր:

ԺԴ դարուն Ճօն Ուիլքիֆ Անգլիոյ մէջ ելաւ ամենայանդուզն կերպով բողոքելու արիւղ եկեղեցւոյն ինչ ինչ սովորութիւններուն ու վարդապետութիւննե-

(շարունակելի)

րուն դէմ, և համարձակեցաւ նոյնիսկ անմասշէի Ս. Գիւրգր Անգլիկոսին թարգմանելու, և ժողովուրդին իր լեզուով հասկցնելու թէ՛ ինք որքան հեռայն է իր հարազատ կրօնէն: Ծօն Ուիլքիֆ ար իրաւամբ կոչուած է «բարեկարգութեան լուսաբեր աստղը», պատճառ դարձաւ նոյնիսկ անգլիական բարյամէնդին մէջ հերետիկոսներու դէմ որոշ տրամադրութիւն մըն ալ աւելցնելու, այն էր «նոր ազանդաւորներ խարոյկին դատապարտել այլոց արտերը անարեկելու համար»:

Եւ սակայն մարդկային խնդր չի բռնաբարուիր, ո՛չ օրէնքով և ո՛չ բնութեամբ, ո՛չ հաւրով և ո՛չ ալ սուրով:

Կրօնական այս մեծ բարեկարգիչէն անմիջապէս ետք՝ Բրախայի համալսարանին աստուածաբանութեան վարդապետը Ժան Հուս, խիզախօրէն յարձակեցաւ Ս. Գրոյց սգիին հակառակ մուտ գաւած անմարտիկ զեղծումներուն վրայ, և վերջապէս իբր հերետիկոս ողջ ողջ այրուեցաւ: Իր աշակերտները Հերոնիմոս և Սալմոնարուա դարձեալ նոյն անողորմ բողոքին արժանացան. ինչպէս Ալբիկեաններուն, նոյնպէս և Հուսեաններուն դէմ սկսաւ սաստիկ հալածանքը, և այսպէս հաւասար քննութեան ատեանը անքաւելի ոճիրներու դժնետեսիլ թատերաբեմ մը հանդիսացաւ, թանկագին ծաղիկներ միայն քաղելով կեանքի բուրաստանէն: Այսպէս ահա Ուիլքիֆ, Հուս, Ներոնիմոս և Սալմոնարուա եղան այն քառեակ ռահ վիրաները բարեկարգութեան, որ վերջապէս ԺԶ դարուն իրագործուեցաւ անմահն Լուստրի ձեռքով:

ԹԱԴԷՆՍ ԺԱՄՈՒՅԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԸ

Ներկայ ամսոյս 10ին Վսեմ. Միւթէ-սարրֆ Մաճիտ պէյի նախագահութեան ներքեւ իսարէի, պէլէֆիյի անդամներու, և քաղաքի թուրք և քրիստոնեայ դիրքի տէր անձնաւորութիւններու հետ միասին ժողով մը գումարուած է, որոնց օրագիրը եղած է, քաղաքս զինուորական ֆորզա մեքէզի բլալու հետեանքով 1.— 6000 զօրք իր մէջ պարունակելու չափ ընդարձակ զօրանոցի մը պէտքը: 2.— Վառօթարանի ու գէնքի մթերանոցի յատուկ շէնքի համար յարմար վայրի մընտրութիւնը, և 3.— Այս շինութիւններուն համար դրամ հայթայթելու միջոցները:

Որչափ որ կրցինք ստուգել հետեւեալ որոշումները արուած են:

1.— Զօրանոցի յարմար վայր նկատուած Սեւայ Տիւզին:

2.— Վառօթարանի և գէնքերու մթերանոցի համար ալ որոշուած է նոյն վայրին մէջ տեղ մը շինել:

3.— Դրամի հայթայթումն ալ կարգադրուած է հետեւալ կերպով: Յորենի հրապարակին վրայ գտնուած զօրանոցի 4000 ոսկիի ծախել թաղապետութեան, 500 ոսկի առնել պատերազմական նախարարութիւնէն, 500 ոսկի ալ ժողովրդային հանգանակութիւն մը բանալ և 2000 ոսկիով ներկայ Սէրայ Տիւզին, իր բոլոր պարագաներովը 6000 զօրք առնելու վիճակին վերածել:

Միջավայրին անժանօթ անձերու կողմէ առաջին ակնարկով կրք կը դիտուի տիրուած որոշումները, անոր մէջ հակառողջապահական և հակաժողովրդային կէտեր չի նշմարուիր, և կ'ուզենք գոնէ հաւատալ թէ այդ օրը հող ներկայ եղող անձերը միջավայրին իբր թէ բոլորովին անժանօթներ՝ այսպիսի որոշման մը ներքեւ ստորագրած են, այլապէս՝ մենք պիտի

այնպիսի հետեւութիւններ հանէինք որոնք կրքէք նպաստաւոր չեն կրնար ըլլալ գէթ քրիստոնեայ ժողովականներու մեծամասնութեան համար: Որով ներկայիս կ'ուզենք ճանչնալ զանոնք ժողովրդային շահի տեսակետէն անգիտակցիւնք, և երբ մենք այսքան փափկութեամբ կը մօտենանք խնդրոյն, կը յուսանք թէ իրենք ևս հետեւելով մեր ցոյց տուած կէտերուն իրաւացիութեան՝ ասկէ վերջ գէթ, կ'աւայգւրսի ժողովներու ներկայ չեն ըլլար, կամ կ'որով կ'ունենան ժողովրդային իրաւունքները իրենց ամենէն նուիրական հանգամանքովը ճանչնալով՝ ծառանոց հակաժողովրդային սրտմանց գէմ:

Դանք բո՛ւն որոշումներուն և տեսնենք թէ անոնք կ'արդարապէս մեր դիտուութիւնները:

1.— Զօրանոցի յարմար վայր նկատուած է սեւայ Տիւզին: Տեղ մը որ ասկէ առաջ միայն 150—200 զինուոր գտնուած պահուէն, գործնական փորձառութիւնը ցոյց տուաւ թէ չըջակայ բոլոր թաղերու բնակիչները կը նեղուէին նախ՝ կրթիւնէ, երկրորդ՝ ջուրին նուազութիւնէն, ազատութիւնէն, անմաքութիւնէն, այնպէս որ գարնան սկիզբէն սկսեալ զինուորներու քմահաճոյքին համար ջուր պակասութիւնը այն ստափճան զգայի կ'ըլլար որ ժողովուրդը իր կրած նեղութիւններէն՝ ակամայ պահանջողը հոտ շինուելու պատճառ եղողները կ'անշուք: Երրորդ, զօրքերուն չըջակայ տուններէն և այգիներէն պատճառած նշւթակա և բարոյական վնասները, չորբող, նոյն վայրին կից Սաւաթիոյ եկեղեցին և ժողովարանը գտնուելով, զօրքերը իրենց դիրքի բարձրութենէն օգտուելով կը շարունակէին ամբողջ երկայնքին և ուղղակի բակերը կը դիտէին ամբողջ պաշտամունքի մեջոցին, և նոյն պահուն զօրքերու

փողի վարժութեան խաղացիչ ձայնը կը խանդարէն բարեպաշտ ժողովրդեան ազօթքը: Հինգերորդ՝ զօրքերու յատուկ եղող ֆիւնգուսթիւններէն Dysenterie Typhus, Fievre Typhoideի ջուրի միջոցաւ ժողովրդեան մէջ համաճարակի դեր կատարելը, ինչ որ եթէ ըլլար ճշգրիտ վիճակադոյր մը այս որոշապէս մէջտեղ կը դնէր:

Ինչպէս տեսնուելաւ, նախորդին մէջ երբ այսքան քիչ զինուորներով ժողովուրդը այսքան անհանգստութեան և տանջանքի մատնուած էր, հիմայ երբ 4-6000 զինուոր քերուի ու գետեզուի այդ ափ մը հողին մէջ՝ ա՛լ կրնաք երեւակայել թէ ի՛նչ նիւթական և բարոյական նեղութիւններու չի մատնուիր այդ շրջանի ժողովուրդը: Եթէ այդ 6000 զինուորները առտու երեկոյ միայն լուսաւուելու ջուր առնեն՝ թաղերու ջուրը կը կտրի, եթէ մարզանքի համար փողոցներէն անցնին երթեկութիւնը ժամ մը կը դադրի փողոցներուն մէջէն: Եթէ տարաւիսիկ շահագութիւն մը մանէ իրենց մէջ ալ ձեռքդ քաշէ քաղաքէն: Այդքան մարդոց շնչած օդը նոյնիսկ կը թռնաւորէ քաղաքը: Ասանք միայն քաղաքացիներուն կրելիք վնասներն են, իսկ զինուորներ ի՛նչ կ'ըլլան այդ սեղմուած տեղը, այդ ալ կը թողունք զինուորական առողջապահական մարմնի նշանագրութեանը:

2.— Վառօթաբանի և գէնքերու մթերանոցի համար ալ որոշուած է դարձեալ Սէրայ Տիւզին. և պահ մը խորհուած է դպրոցի շէնքը յատկացնել ասոր: Մասաղ սերունդը որ ամենէն աւելի պէտք ունի մաքուր օդի, կը խորհին տանիլ չուկայի աղբոս մթնոլորտին մէջ. իսկ հոն կ'ուզեն վերածել վառօթաբանի: Տեղ մը որ վատնգի մը պահուն կրնայ ոտս կալիօրէն փճայնել շրջակայ թաղերը:

3.— Ժողովրդային հանգստանակութեամբ

կ'ուզեն զօրանոց շինել. երկրին պիւտճէին կէսը, միայն իրեն համար գործածող պատերազմական նախարարութենէն չենք կրնար սպասել այնպիսի ձեռնարկ մը՝ որ տնտեսապէս արդէն փճանայու վիճակի մէջ եղող այս Գժաղդ ժողովուրդը քիչ մը աւելի գլորէ դէպի վար՝ հանգստանակութեան միջոցին դիմելով: Եթէ կ'ուզուի զօրանոց մը շինել ուր զինուորները հանգիստ ըլլան, և նոյն տունն բոլոր նախարարութեան ատեն եղածն պէս չ'ըլլալով ժողովուրդը աւելի տաք վերաբերուած մը չ'ոյր ապա դէպի զինուորութիւնը այն ատեն պէտք է յարգել օրէնքը և զօրանոցները շինել քաղաքէն գէթ մէկուկէն ժամ հեռու, երբ շրջակայները չեն պակսիր յարմար վայրեր, ինչպէս Կեգիրլիկ, Ագպիլիկ, Ղարաղան մէյսանը ևն, ուր թէ օդը, թէ ջուրը, թէ տեղին ընդարձակութիւնը և թէ առողջապահական հանգստանքները լիովին զօրանոցի մը յարմարութիւնը կուտան: Եւ այսօր միայն 2000 ոսկի պիւտճէով զօրանոց մը շինելու տեղ, ներկայ երկու զինուորական պահականոցները 5-6000 ոսկիի ծախելով՝ առանց ժողովուրդին, և նոյն ատեն պատերազմական գանձուն վճարելով՝ կարելի կ'ըլլայ 6000 ոսկինոց կարևոր զօրանոց մը շինել ուր թէ զինուորը հանգիստ կրնայ ընել, և թէ այն ատեն նեղայ ժողովրդային յուզումը հանդարտած կրնայ ըլլալ:

Արդ, ժողովրդային շահերէ առաջնորդուած, կը խնդրենք Վսեմ. Մաճիս պէյէ, որ այս օրեր թէ առաջնորդարանէ տրուած բողոքի հանրագրութիւնները, թէ ուղղակի իրեն տրուելիք բողոքագրերը իրենց օրինական պահանջներով լուրջ ուշադրութեան ենթարկելով՝ իր շուրջը բոլորուող կարգ մը շահագէտ անձերութեւրութիւններէն աւելի՝ աղքատ, թշուառ և իր պատւոյն համար տանջուող ժողովրդեան բողոքը լսելով՝

1 — Հեռացնէին զօրանոցը և վառօժարանը քաղաքէն հեռու, հիմնուելով օրինական տրամադրութեանց վրայ:

2. — Արդէն թշուառ ժողովրդեան վրայ հանգանակութեան նոր բեռ մը աւելցնելու տեղ՝ ներկայ պահականոցի չէնքերը ծախելով հոգացուէր ժողովրդային հանգանակութեան պակասը:

3. — Արդէն այս նեղ քաղաքին մէջ քիչ մը օգտանելու համար բայօթեայ մօտ հրապարակ մը չլլալուն՝ առողջա-

պահական տեսակետէն իսկ, Սերայ Տ՝ Լզին վերածել հասարակաց պարտէզի՝ և այս կերպով հասոյթ մ'ալ չինել թաղապետութեան:

Այս կերպով միայն կարելի կ'ըլլայ 7 թաղերու բնակիչները հիւանդութիւններէ ազատ պահել: Մենք, վստահ վեհմ. Մաճիս պէյի ժողովրդասիրութեան և արդարադատ ոգւոյն՝ ԿՍՊԱՍՅԵՆԻ ԱՐԴԻԻՆԻՆ...

ՄԻՆԱՍ ԻՓԷԲՃԵԱՆ

ԳԱՐԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ծնունդի արձակուրդը Մարգուանի համար առատ չափ առատ ներկայացումներու բեղմնային չըլլան մը եղաւ: Անաթալիա գոյէճի Շաւարշան Միութեան կողմէ ներկայացուեցաւ Վ. Փափազեանի «Փայո»-ը, Ե. Բ. Լնիերակցութեան կողմէ «Վարդան»-ը, Ս. Դ. Հնչ. Կուս. տեղ. Մ. Կողմէ Շիրվանզադէի «Պատուի Համար»-ը, և տակաւին մօտ օրէն ներկայացուելիք ուրիշ բազմաթիւ: Բայց այս ամենուն մէջ կ'արեւ յիշատակել պարագայ մը որ իր նախնիքը չէր ունեցած, այն է երկսեռ մասնակցութիւնը թատրոնին մէջ: Հնչակեան թատերասրահին մէջ «Պատուի Համար» ներկայացուեցաւ արական և իգական սեռերու մասնակցութեամբ:

Թեմա, իւրաքանչիւրը իր սեփական դերին մէջ: Նախապաշարուած վարագոյրներէն մէկն ալ պատուեցաւ և իգական սեռը այլեւ իր քաղաքակրթական դերին մէջն է նոս. — հանդէսներ՝ երկսեռ, վեհաքանութիւններ՝ երկսեռ, գրական և բեկոյթներ՝ երկսեռ, թատերական ներկայացումներ երկսեռ, և ամեն բան երկսեռ. ահա Մարգուանի զարգացական ձեռնարկներու ժամանակակից բնութիւնը: Թող Ամատիային, Թողաոյին, Սեբաստացին, Հաճի գիւղիցին, և զաւառի ուրիշ անկիւններ օր առաջ փութան դէպի իսկական և լայն յառաջդիմութիւն, իգական սեռի փրկարար դերին իրապէս գիտակցելով:

ԱԻԵՏՈՒՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Ներկայ ամսոյն Արն Ս. Երկուցսեան և Արն Ս. Երեսեան մանկապարտէզներու հանդէսները տեղի ունեցան:

Իբրանուտեան Առեւ. վարժարանն ալ ամսոր ծին կ'աւարտէ օրը սարքից հանդէս մը ու ծնողական ժողով մը: Վերջինը յետաձգուեցաւ յարմար առիթի մը:

— Նորակազմ Ազգ. հիւանդանոցը 1912 Յունիս. Աէն սկսեալ հիւանդներ բնդուել սկսած է և Բրքնիկի Յովհ. Մանուէլեան Եօր դարմանուելէ վերջ մեկնեցաւ:

— Տիար Ռուբէն Պրչագեան ծնունդի վազանձի միջոցին, յաջողած է Զիլէի մէջ զօրաւոր Հնչ. մասնաճրւղ մը կազմել:

— Խմբագրութիւնս իր բարեկամին ու ծանօթ գրագէտին՝ Տիար Մանուկ Խարշեանի՝ Օր. Էլիզա Պալան վարդեանի հետ կնքած ամուսնութեան առթիւ, իր անխառն շնորհաւորումները կը յայտնէ:

Արտուստիկ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆՈՒՄԵԱՆ

Խմբագրապետ՝ ՄԻՆԱՍ ԻՓԷԲՃԵԱՆ

Տպ. ՅՈՎ. ՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

۳

طور مق بیامز کچر کیدر ظالم زمان
اونک بخنی و یازیسی یودر همان
ایلرویه قوشه قوشه اوچاد کیدر
ینالمری استهزا و تحقیر ایدر

۴

حقدن بزه زمان اولمش نعمت بخشا
بونه احسان بونه لطف کراتبها
هیما! هیما! بو دنیاده اکثر انسان
تقدیر ایتمز، اراماز که ندر زمان

قطعه

اتحاد جمعیت محترمی لماندن:
اتحادی شان مات، اتحاد و اتفاق
نقایه آملردر، مسلك مقصودمن
جمله من بر، قرده شز مابینم زده یوق تفق
ظلم و نادانی، اسارت دائما مردودمن

۵

طور مق بیامز کچر کیدر همده چاییق
زماندن کار چیقار مالی، بزه یازیق
بز زمانک انکته صاریلم
طور مایلم شوق، غیرتله چالیشالم

۶

بوش کچورمه زماندن بر نفس بیله
چون ایدرسک اوز نفسنی بیوک حیل
بونی تقدیر ایدن ادم بولور شهرت
هم تو کتمز خزینه لر همده موقع عزت
فکری ذبله

قطعه

دهر ایچنده اکسک اولماز سیل طوفان بلا
جمله اشیا مطلقا معروض اولور جریانته
اشبو سیلاب بلاده بر زمان پویان اولوب
عاقبت واصل اولور بر کون عدم عمرته
چوروم ابوالشوکت

اماسیه غزته سی مدیریته

افراد جدیده دن اجابت ایتمانلرک اولبایده کی ماده
قانونیه موجبنجه زجرأ ایکی مثلی استخدام اید-
یله جکی اعلان قلنور ۱۱ کانون ثانی سنه ۳۲۷
دیگر

بو کون مستقیماً بتوفیق تعالی داخنیه نظار-
نی درعهده ایلیم اس سیاستمز قانونی رهبر
اتخاذ ایدرک بتون عثمانلیرک نعم عدالت و قوائد
مشروطیتدن متساویاً استفاده لرینی تأمین و بین-
العناصر آهنگ وفاق و امنیتی بر قات دها تأیید
ایتمک اولدیغندن بو امینه خبریه نک حصوله و

حکومتک اقدام وظائفی اولان امنیت عمومیه تک
محافظة سی اسبابینک استکمالنه صوک درجهیه قدر
همت و مأمورین ملحقانده اولوجمله تبلیغات
اجرامنه مسارعته بیورلمسی متمنادر

داخلیه ناظر جدیدی حاجی عادل بک افتد-
ینک ولایتدن مبلغ ۱۰ کانون ثانی سنه ۳۲۸
تلغرافنامه سی صورتی بالابه نقلاً تبلیغ اولنور
۱۲ کانون ثانی سنه ۳۲۷

اماسیه متصرفی
احمد ماجد

احوال حقنده شمیدی به قدر ر مارفدن حکو-
 مته مراجعت وقوع بولمدنی و مختارانک وظیفه
 اساسی لریدن اولان تحقیقات ابتدائی بی اجرا و
 انوراقی حکومته تودیع ایتماش اولدقلری ارائه
 ایدن بو اوراقده مظلونیتلری ادعا اولان الی
 شخصله وظیفه لری سوء استعمال ایدن مختار
 مختائل و عبدالرحمن و عثمان جقلرنده تعقیبات
 قانونیه ایفاسیچون ایجیق مکتوبک صورت مقر-
 جه سیله برابر مدعی عمومی معاوندلکه حواله و
 تودیع قلنمشدر هر نه به دائر اولورسه اولسون
 و زده وقوعبولورسه بولسون حکومت مشرو-

طه خبردار اولمدنی بر وقعه نك فاعللری تعقیب
 و دردست خصوصنده وظیفه مرتبه بی کمال سر-
 عتله ایفا ایتمکده و حقوق خلقک محافظه سی
 و استراحت عمومی نك خللدن مصونیتی اسباب نك
 تأمینتی بر وظیفه مقدسه بیله رک اکا کوره ابراز
 مساعی ایتمکده اولدیفندن بویه بر وقعه بی اخبار
 ایلدیگکزدن متحاصل ممنونیتی بیان ایله بونکده
 غزنه کزله نشرینی نئی ایلرم سا ۱۵ کتون ثانی
 سنه ۳۲۷ اماسیه متصرفی
 احمد ماجد

اورق وارده

سوکیلی وطنداش.
 اهلگیری بوجه لکم و حیاته حاضر لاق
 ایچون چیقارمقده اولدیغکزر رساله دن طولانی
 تبریک ایدرم . سنده عزیز خاطره لری ابدی
 اولارق قالاچق اولان محترم اماسیه عرفان و
 وجدان ملیسنه بو مهم قوتله ایدیلجک خدمت
 محتاج اولدیغمز اجتماعی انقلابک ایلک تمل طبا-
 شلرندن یری اوله جقدر . بن استردم که بو مبجل
 خدمته بن دخی شعرلرمله اشتراک ایدم . فقط
 بوکا شمذیلک زمانم مساعده ایتمدیگندن عفو می
 دیلرم . و موفقیتکزه دعا ایدرم .
 باقی الله و وطن سا ۳۱ کتون اول سنه ۳۲۷
 ارضروم والیسی
 محمد امین
 محترم اماسیه لیلره سلامی تبلیغ بوپوراجق
 اولورسه کز متشکر اولورم .
 ارمیجه به اتباعاً

زمانه

طورمق بیلمز کچر کیدر غایت چاییق
 نمکنمیدر؛ ضبط ایچی اونی ارتق
 یلدن، صودن دها سریع زمان اوچار
 ییلدیرم کبی پارلاق اوزون ضیا صاچار

طورمق بیلمز کچر کیدر غایت چاییق
 هیچ بر شیشه دیمک بیلمز اولمش یازیق
 یوکسک الحاق نیه دره و طاغلی
 ارسلان کبی چینسار کچر یوغی داری

برر شتم و ستم تحقیقات کبی باعمال ایدرلر

مدیر و مجرب ذهنلر خیر اوکودلری و مفید تصاحی بویله سی مشکل و طبعیتلرده بزم کبی بیطرفانه دوشونن فکرلر نه صورتله طورانه حقلری نه مسلك طوته حقلری شایرلر شاید بر جنایت موا جهه سنده سکوت ایتسهر کنسه ایشلرلر مادام که آنک نتایج و خیمه سی کندیلردن زیاده سفیل ساده دلی اهالی چکه جکدر و یاخودده ناصح وضعیتی التزام ایتسهر عوامک جهالت ریاستی امتیاز بیلنلرک کفر دینسز حقارانه هدف اوله حقلر چون بو طاقم عوام کتله سی پیشدارلری دین امان مذهب عقا ندینی کندیلرینه آلات اتحاد ایدرک اهالینک صحابی ادعاسنده بولدورلر بالمله مخلوقاتک خالق هینک صحابی اولوب فرد آفریده نک دیکرلرک حسیاتی و افکاری ضبط و اداره به اصله حقلری اولدینی خطرلرینه بیله کتر مزلر بویله سی احوالده ک زیاده موجب اسف اولانی جاهل و ساده دلر عوامک حالی در زیر ا عوامک مرتکبی بولندلری افعالده موجود شخصی اشتراکری کورکور ینه ایشلین و باشده بولنلرک ترتیبلری موقع اجرا قویان آدم الاشکال ماکه لقدن ایلری کمر و بو جمله احوالده مسئولیت صاحبی تعیین و طریق استقامتی تفریق اعتدال دخله کلی مجاهد و مذاکره به محتاج اولوب و حال حاضر بوکا اصلاً مساعد بولندینی کون کج اشکار بر حقیقت اولد ینمن وظیفه یکنه بو مجاهده مباحثه به مساعد راحت بر جریان اکتساب ایچون وار قوته غیردر وطن خطر سی غزته ستونلرینه الوداعا ایلدی دللردن یاد اولدی وطنروراکلری عالمه ایتاندرمه چالیشان ذوات کرام اول وظیفه مقدسه یی ترک ایتدیلر وطن آوازه سیلا نعون و تحکم حکومت بولی طوته حق یرده جهاد شریفه ولوله سیله شهادته دعوت ایدیورلر جمعیتی و ایتالیه حکومتنه قارشی محاربه به چاغریلما سی ایجاب ایدن اولاد وطنی خریستیانلغه قارشی چقمق ایچون اسعدا ده سوق ایدیورلر

التنحی نومرو ایله مقام متصرفیه تقدیم قلنان ارمنی العبارة آجیق مکتوبک جوابا سیدر

اماسیه ده اماسیه غزته سی مدیر مسئولی حایقازون افندی به

غزته کزک ۳۰ کانون اول سنه ۳۲۷ تاریخ و
القی نومرولی نسخه سنده مندرج ارمنی العبارة
آجیق مکتوبی ترجمه ایتدیرلرک او قودم ظنه
قریه سنده وقوع بولان حیوان سرقتلرینه حکو
متک عطف نظر اهمیت ایتماسی اوراده کی روم
لرک تمادی مفیدوریتلری مستلزم بولندیغندن
باحث اولان بو مکتوبده مدعی شخص اوله رق
کوستریلان ارسلان اوغنی ایلیا ایله مسلم و غیر مسلم
مختارلردن ژاندارمه دائره سنجه اجسرا و تودیع
اولسان تحقیقات اوراقته نظراً صاحب مکتوبک
بر قاج رومک افاده مجرد سنه الداندینی تظاهر
ایتشدر بو کویده جریان ابتدکی بیان ایدیلان

امانت‌نیه

مشره منادیهی

نومرو ۷

کانون ثانی ۱۵ سنه ۳۲۷

برنجی سنه

مصر اسلام خاندانیدن مشهور بر عرب محردی ولی‌الدین بکن نام ادینک تورکیه خرسینا-
نلرینه و طرابلس غرب محاربه‌سنگ عموم خرسینانلق علیهنده تولید ایلدیکی منافرت حقنده مطالعا
تی مخصوص دوشونککلی

تورک محردلرمن و غزته‌جیلرمن ملتیزی محو و هلاک اوچورمنه سوق ایدیورلر . آنلردن
چوینک محرداتنده کورولن بعض آجی و مناسبسز سوزلر محافظه‌کار فکرلری دکل و قتمزک اک
حریت‌رور سیرت‌لرینک بیله عزت نفسی پایمال ایده‌جکه شبهه‌من یوقدر . کولکلری منکسر اول
بریشان عنصرلری اوقشایوب سومک آنلری تحریک هم تشویق ایله‌مک وظیفه مقدسه در ایتالیه
ایله آراهنده نکون ایدن بر بدبختلق بزه اسکی تمصب محافظلرمنی تکرار ایتدیر یورلر، بوجه‌التلرک
دخی بزم ایچون موجب خجالت اولمقدن باشقه بر خیری یوقدر.

بو خصوصده عقل و منطق صاحبی دها و دکالرمز طرفدن سرد و بیان ایدیلن هر نصیحت
هپ افکار کارکر تائر اولدیلر . و بو سیددن بر طاقم متمصب جهلا فرصت بولهرق نجییه ساده دل
اذهالتی و رخیلی شارلاتانلری اغفال ایدوب افکار عامه‌بی زهره‌مکدن ال چکمه‌دیلر اللهدن قور
قق انسانیتدن خجیل اولق حسیاتندن بییهره نجییه رزلا عثمانلی عناصر متنوعه‌سی میانه تفاسق
عداوت نخومی صاحبی کار بیلدیلر اهالی‌بی دهشت انکیز جنایتلره تشویقندن اجتناب ایتدیلر
کندیلرک بو صورته وظنه بشریت ابراث ایده‌جکلی تدازیسی محال ضرر و زیانلری بیله اصلا
نظر دفته المادیلر .

آدملر جهالت صاعقه‌سیله مدائمه ارنّا و طبعاً مربوط بولندقلری افعال و انوالدن تلرز ایتکه
و انلره محظوظ اولمغه میال اولوب قسا و ادنی افعال و افکاره دها بویوک استعداد کوستره‌رک

Ս. Գ. Հ. Աւսանողական օւկան
 Եմաքերք
 Հասարակական, Գիտական, Գրական:
 Բաժնեգին տարեկան 12 դր.
 Հասցէ «Կաճ» հմբ. փոստարկղ թիւ 97
 Կ. Պոլիս:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՀԱՅԿԱԶՈՐՆ ԹԱՊԻՊԵԱՆ ԱՄԱՍԻՍ.

Ոսկի գորուն եւ պրիմ նաեւ սեյի-
 լոյս արհեստական աւամներ շինելու
 Ս.Ներիկեան մէքօսը սարժիլ ուզող
 բոլոր աւամնաբոյժներու կը յայ-
 տարաւ թէ ինք պատրաս է այդ
 մէքօսը սարժեցնել նպատաւոր
 պայմաններով:

سیغورطه جی

سیمون فارقیان

آماسیه

آلیانسه عمر سیغورطه می لانتاشه حریق
 سیغورطه قومپانیه لرینک اجیتی در.

مناسب شرائط له هر نوع سیغه. طه بشری

یاپار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسولر

چیشیان ارتین اغا دکانتک اتصلنده باتمانی

۵۰ (الی) بارهیه معدن کموری صاتیور.

هر کسی فرصتدن استفاده ایتسون.

ԱՏԱՑՈՒՄԻՆ ԳԻՐԲ

Արցունք. — Հեղ. ՎԱՀԱՆ ԱՐՍԼԱՆ եջ
 32 Գին 2 .50 դր. Քսաներկու ոսանա-
 լուրներէ գաս կը պարունակէ 2օն մըն այ
 Բանասեղծական գողտիկ հասորիկը, զոր
 հեղինակը իր վաղամեռիկ կնոջ բարձր հո-
 դակոյտին կը նուիրէ, կարծի կարդալ:

Բ. Շրջան Հայկունի

Նորանասներու Կիսամսեայ հանդեսը
 հմբ. Գ. ՕԶԱՆԵԱՆ

Կը հրատարակուի ամեն ամսուն 1ին եւ
 15ին: Բաժանուող տարին կ'ստանայ 20 թա-
 բանուրդագրութիւնը անպայման կանխիկ
 է, երովնեան խմբագրութիւնը արդէն զուս
 գաղափարական բարեյօծարուբեամբ գործն
 ստանցնած է:

Բաժանուրդագրութիւն

Թուրքիա 13 դր. տարեկան

Արտասահման 4 .50 մր.

Ամերիկա 1 տղ.

Հասցէ: Մարզուան հմբ. «Հայկունի»ի

Բ. Շրջան «Բողբոջ»

Սկսնակներու կիսամսեայ հանդեսին
 հմբ. Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Սկսնակները գրական ասպարեզի հրա-
 լիւրով ու զանոնք բաժախերով միակ ձեռ-
 նարկը նիւթական զոհողութեամբ կը հրա-
 տարակուի: Բաժնեգին կանխիկ է:

ԿԱՀԱԿ

Պատկերազարդ շաբաթաբերք Գրական,
 Քաղաքական, Տնտեսական եւ Բնկերային.

Մեծադիր 12 էջէ բաղկացած

Տէր եւ Տնօրէն Հ. Արամեանց

Բաժնեգին տարեկան 20 դր.

Հասցէ՝ հմբ. «Կոհակ»ի Փոստարկղ թիւ 12
 Կ. Պոլիս

الْمَاسِي

صاحب امتیاز و
مدیر مسئولی
حایقازون طیبیان

شرائط اشترا
بر سنه ایکی مجید
الی ایلی یرم مجید در

سر محرومی مناس ایک جہاں یاخود

طشتره منادیسی

سیاسی فنی ادبی اقتصادی و اخلاقی عزتہ در
ہر اون بش کونندہ بر نشر اولنور

نومرو ۷

۱۵ کانون ثانی ۱۳۲۷

پرنجی سنا

محتویات

ترکیہ خرسیتیانلری و طرابلس غصب محاربہ سی
آجیق مکتوبک جوابی
اوراق وارده
زمان
ولی الدین بک افندی
متصرف احمد ماجد بک افندی
ارضرزم والیسی محمد امین بک افندی
ابوالشوکت

حوادث متعدده

مطبعه مزده ترکیه ارمیجیه رومجه فرانسزجه و انگلیزجه ایسانلریله هر نوع اعلانات،
اوراق تجاریه، قارت ویزتله، مکتوب باشلری، کتابلر، نشریه و مطبوعات عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یکنه من محترم مشتریلمیزی ممنون
قلماق در.

Տպարանին մէջ Տապիւրէն, Հալէլէն, Յունարէն, Դրանսրէն, եւ Անգլիերէն լեզուներով ամէն տեսակ Ազգեր, Վաճառականական քրքեր, Բարս փղիքներ, Նամակազգայիներ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ հաշակաւ որ կը տպագրուին։
Միակն նպասակելիս է գոն քողով յարգելի յանախորդներ։

آماسه ده

مطبعة هونانيان و يارديميان